Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2024-2025 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է խորհրդայնացել Վրաստանը. 0,5 մ.
   ա) 1920 թ. բ) 1921 թ. գ) 1922 թ. դ) 1925 թ.
2. Ո՞ր էր 1921 թ. Մոսկվա մեկնած հայկական պատվիրակության ղեկավարը. 0,5 մ.
   ա) Սարգիս Կասյան բ) Ասքանազ Մռավյան
   գ) Ալեքսանդր Մյասնիկյան դ) Ալեքսանդր Բեկզադյան
3. Ո՞ր գավառում էր գտնվում Երնջակ բերդը. 0,5 մ.
   ա) Գողթն բ) Արագածոտն գ) Նախճավան դ) Վանանդ
4. Ո՞վ է հաջորդել Վահան Մամիկոնյանին մարզպանի պաշտոնում. 0,5 մ.
   ա) Վարդ Մամիկոնյան բ) Վարդան Մամիկոնյան
   գ) Մուշեղ Մամիկոնյան դ) Մանվել Մամիկոնյան
5. Ո՞ր թվականին է կնքվել Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը. 0,5 մ.
   ա) 289 թ. բ) 287 թ. գ) 298 թ. դ) 387 թ.
6. Քանի՞ կմ^2 է Արցախի Հանրապետության տարածքը. 0,5 մ.
   ա) 29,8 հազար բ) 14,5 հազար գ) 7,5 հազար դ) 12,5 հազար
7. Հայաստանի ազգային փոքրամասնություններից որի՞ ներկայացուցիչներից կազմված ջոկատն է քաջաբար մարտնչել Բաշ Ապարանի հերոսամարտում. 0,5 մ.
   ա) հույներ բ) ռուսներ գ) եզդիներ դ) ասորիներ
8. Ե՞րբ է ստեղծվել Արցախի (Խամսայի) մելիքությունների ինքնավարությունը. 0,5 մ.
   ա) 1735 թ. բ) 1736 թ. գ) 1724 թ. դ) 1727 թ.
9. Ե՞րբ է ընդունվել ԽՍՀՄ Ստալինյան սահմանադրությունը: 0,5 մ.
10. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հայկական ո՞ր դիվիզիայի հրամանատարն է զոհվել Կերչի թերակղզու համար մղված մարտերում: 0,5 մ.
11. Ո՞վ էր գլխավորում Հաճընի հայության 12-օրյա ինքնապաշտպանությունը: 0,5 մ.
12. Որքա՞ն զինվոր ուներ Խամսայի մելիքություններից յուրաքանչյուրը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Խաղխաղի ճակատամարտը
    բ) Մարզպան Վասակ Սյունու բանտարկումը Տիզբոնում
    գ) Հայ նախարարների առերես կրոնափոխությունը
    դ) Դենշապուհի կողմից աշխարհագրի անցկացումը
    ե) Ավարայրի ճակատամարտը
    զ) Արտաշատի եկեղեցական ժողովի հրավիրումը
    է) Անգղի և Զարեհավանի դեպքերը
    ը) Վասակ Սյունու հեռանալը ապստամբությունից
    թ) Դենշապուհի կողմից հարկերի բարձրացումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. «Հայոց պատմություն»
    2. «Տիեզերական պատմություն»
    3. «Սիսական նահանգի պատմությունը»

4. «Գիրք հարցմանց»
5. «Ժամանակագրություն»
6. «Տարեգիրք»

1	2	3	4	5	6

ա. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
բ. Գրիգոր Տաթևացի
գ. Սմբատ Գունդստաբլ
դ. Հովհաննես Դրասխանակերտցի
ե. Ստեփանոս Օրբելյան
զ. Գրիգոր Դարանաղցի

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Սեպագիր արձանագրություններում առաջին անգամ Արցախը (Ուրտեխի անվամբ) հիշատակում է Սարդուրի Ի-ը, քանի որ նա է գրավել հայկական ցեղերով բնակեցված ու դեռևս չմիավորված վերջին տարածքը՝ Արցախը, և հասել Կասպից ծով:
բ) Հին քարի դարը Հայկական լեռնաշխարհում տևել է մինչև Ք.ա. XII հազարամյակը, իսկ այդ ժամանակաշրջանի նշանավոր հուշարձաններ են Արտին լեռան, Արզնիի և Ազոխի քարանձավ հնավայրերը:
գ) Ք.ա. 95 թ. կնքվել է հայ-պոնտական պայմանագիրը, որն ամրապնդվել է Տիգրան Մեծի և Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի դստեր՝ Կլեոպատրայի ամուսնությամբ:
դ) 1909 թ. թուրք ջարդարարների դեմ Մարաշ քաղաքի հայության յոթնօրյա հերոսական ինքնապաշտպանությունը գլխավորում էին Ղևոնդ և Գյուտ վարդապետները:
ե) 1771 թ. Մադրասում հիմնվել է հայկական տպարան, որտեղ տպագրվել է Շ. Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատությունը:
զ) 1849 թ. կազմված Երևանի նահանգն ընդգրկում էր Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառները:
է) 1882 թ. մի խումբ հայ ուսանողներ Մոսկվայում հիմնել են «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որը տպագրում էր «Ազատության ավետաբեր» թերթը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) Իրար ազգակից մի քանի մեծ ընտանիքներից կազմված միավորումը, որի անդամներն ունեին միասնական լեզու, ընդհանուր հավատալիքներ և սովույթներ, կոչվում է ցեղ:
բ) Ջհանշահի օրոք Հայաստանի մի քանի շրջաններում իրենց ժառանգական իշխանությունը վերականգնած հայ նախարարական տների ներկայացուցիչները սկսել են կոչվել պարոնտեր:
գ) Հայերի իրավունքները հայրենի բնօրրանում վերահաստատելու, ազատ, անկախ ու ինքնիշխան համահայկական պետությունը վերականգնելու և մեկ միասնական ու հզոր հայրենիք կերտելու համար ձևավորված գաղափարախոսությունն ու շարժումը հայտնի է «Հայ դատ» անունով:
դ) 1920 թ. նոյեմբերին Բաքվում կազմված ռազմաքաղաքական մարմինը՝ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որի նպատակն էր Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը, գլխավորում էր Սարգիս Լուկաշինը:
ե) ԽՍՀՄ-ում ժողովրդական տնտեսության զարգացումը հնգամյակներով ծրագրելու մոտեցման արդյունքում ստեղծվել է առաջին հնգամյակը (1924-1929 թթ.), որի ընթացքում Հայաստանում շահագործման է հանձնվել արդյունաբերական 81 ձեռնարկություն:
զ) XVIII դ. առաջին կեսին Արցախում և Սյունիքում ստեղծվել են ամրացված շրջաններ՝ սղնախներ, որոնցից նշանավոր էին Գյուլիստանի, Շոշի, Ավետարանոցի, Ջրաբերդի պաշտպանական ամրոցները:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 703 թ. հակաարաբական առաջին ապստամբության ընթացքում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունը Եփրատի հովտում՝ Վարդանակերտ ավանի մոտ, տեղի ունեցած ճակատամարտն էր:
բ) Թորոս II-ը կարողացել է վերականգնել Կիլիկյան Հայաստանի հզորությունը, իր իշխանությունը հաստատել Կիլիկիայի մեծ մասի վրա և ստեղծել 30-հազարանոց մարտունակ բանակ:
գ) Հայ իրականության մեջ պահպանողական հոսանքի ականավոր ներկայացուցիչներն էին Գաբրիել Այվազովսկին և Հովհաննես Չամուռճյանը:
դ) Լազարյան ճեմարանի դասախոս Նիկողայոս Մառը զգալի աշխատանք է կատարել միջնադարյան հայ պատմիչների աշխատությունները թարգմանելու և հրատարակելու գործում:
ե) Արևմտահայության ազատագրությունը Ռաֆֆին տեսնում էր համաժողովրդական զինված պայքարի մեջ և այդ գաղափարները նա ներկայացնում էր իր ստեղծագործություններում:
զ) Առաջին աշխարհամարտի ավարտին Կիլիկիա են վերադարձել բազմահազար հայեր, և արդեն 1919-1920 թթ. հայերի թվաքանակը Կիլիկիայում գերազանցում էր 550 հազարը:
է) 1868 թ. ստեղծած «Արշակ Բ.» օպերայով Տիգրան Չուխաճյանը հիմնադրել է հայկական օպերային արվեստը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (սխալը գտնելը՝ 0,5 մ., ուղղելը՝ 0,5 մ.)

1916 թ. Պողոս Նուբար փաշայի կողմից Եգիպտոսում հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) մինչ օրս էլ ունի կարևոր համազգային դերակատարություն:

19. Աշխատանք պատմական գործչի դիմանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Ո՞ր թվականին հրավիրված գաղտնի խորհրդակցությունում է որոշվել նկարում պատկերված գործչին լիազորել շարունակելու բանակցությունները եվրոպական երկրների և Ռուսաստանի հետ:
բ) Ո՞ր բնակավայրում է հրավիրվել այդ գաղտնի խորհրդակցությունը:
գ) Ներկայիս ՀՀ ո՞ր մարզում է գտնվում այդ բնակավայրը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ են անվանել *«վերջին հռոմեացի կայսր»:* 0,5 մ.
ա) Օկտավիանոս Օգոստոս բ) Դիոկղետիանոս
գ) Մարկոս Ավրելիոս դ) Հուստինիանոս I
2. Ո՞վ է «Էնեական» պոեմի հեղինակը. 0,5 մ.
ա) Հոմերոս բ) Հորացիոս գ) Վերգիլիոս դ) Վիտրուվիոս
3. Ե՞րբ է ռեֆորմացիայի շարժումը Նիդերլանդներում վերաճել ազգային-ազատագրական պատերազմի. 0,5 մ.
ա) 1566–1609 թթ. բ) 1618–1648 թթ.
գ) 1656–1690 թթ. դ) 1588–1618 թթ.

4. Ո՞վ է Իրանում Փահլավիների արքայատոհմի հիմնադիրը. 0,5 մ.

ա) Նադիր շահ
բ) Ֆաթհ Ալի շահ
գ) Ռեզա շահ
դ) Շահ Աբբաս I

5. Ի՞նչ է կոչվում Օսմանյան կայսրությունում բարեփոխումների դարաշրջանը, որն ընդգրկում է 1839–1860-ական թթ. և նպատակ ուներ՝ փրկելու անկում ապրող պետությունը: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Փարիզի վեհաժողովը	ա. 1918 թ.
2. Չ. Դաուեսի պլանի ընդունումը	բ. 1921 թ. նոյեմբեր – 1922 թ. փետրվար
3. Առաջին աշխարհամարտի ավարտը	գ. 1919 թ. հունվար – 1920 թ. հունվար
4. Վաշինգտոնի վեհաժողովը	դ. 1924 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) 1805 թ. Աուստերլիցի ճակատամարտում դաշնակիցների զորքերը պարտության մատնեցին Նապոլեոնին և մտան Փարիզ:
բ) 1905-1911 թթ. իրանական հեղափոխության նշանավոր ռազմական գործիչներից է հայ տաղանդավոր զորահրամանատար Եփրեմ խանը:
գ) 1871 թ. հունվարի 18-ին Վերսալի պալատում ստորագրված պայմանագրով Ավստրիան ճանաչել է Իտալիայի միավորումը, Հռոմը հռչակվել է միացյալ Իտալիայի մայրաքաղաք:
դ) 1866 թ. պրուսական բանակը ջախջախել է Ավստրիային, ստեղծվել է 22 պետություններից բաղկացած Հյուսիսգերմանական միությունը:
ե) Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ավարտվել է 1789 թ. հուլիսի 14-ին Բաստիլի ամրոցի գրավմամբ ու «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունմամբ:
զ) ԱՄՆ-ն ձևավորվել է 1775–1783 թթ. Անգլիայի դեմ ամերիկյան գաղութների մղած անկախության պատերազմի հաղթական ավարտի արդյունքում:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.02.2025 թ.